ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2023 թ. N 402-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 335-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ ս/թ նոյեմբերի 24-ի Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–24112023-10-0202 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի ««Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,0035 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 335-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ որոշման վերնագրում «ՃԱՆԱՉԵԼՈՒ» բառից հետո ավելացնել «, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ» կետադրական նշանը և բառերը,

բ/ ավելացնել նոր՝ 2.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝ «2.1. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման հողամասի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թ. N 403-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 257-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմում գործող Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների ուսումնասիրման հանձնաժողովի կողմից ս/թ հունիսի 21-ին կազմված՝ Ա. Աթանյանին և նրա դուստրերին բնակարանի կարիքավոր ճանաչելու և բնակարանային պայմանների բարելավման հաշվառման վերցնելու վերաբերյալ կազմված գործի վերանայման մասին արձանագրությունը և նույն հանձնաժողովի նախագահ Ա. Խաչատրյանի զեկուցագիրը (մտից՝ N 2197, 26.12.2023 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Անվավեր ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 23-ի «Ջերմուկ համայնքի բնակիչ Աննա Սամվելի Աթանյանին բնակարանի կարիքավոր ճանաչելու և բնակարանային պայմանների բարելավման հաշվառման վերցնելու մասին» N 257-Ա որոշումը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասելու պատճառով. որոշման ընդունման պահին զոհված Համազասպ Մարգարյանի այրին՝ Աննա Աթանյանն ու դուստրերը՝ Անի և Միլենա Մարգարյանները օրենքով սահմանված կարգով ժառանգության բացումից հետո բնակելի տարածության նկատմամբ ունեցել են ժառանգական իրավունք, և չեն հրաժարվել իրենց հասանելիք բնակելի տարածության նկատմամբ ժառանգության իրավունքից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2023 թ. N 404-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 18-Ա ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 294-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը և այդ տեղեկություններին առնչվելու պաշտոնների ցանկը հաստատելու մասին» N 399-Լ որոշմանը համապատասխան ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 10-ի N 18-Ա որոշման (այսուհետ՝ Որոշման) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ N 1 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1.2-1 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի քարտուղար) անձնագրի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետում ավելացնել նոր՝ «գա» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«գա/ վերահսկում է աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների (այսուհետ՝ «Ծառայողական օգտագործման համար»՝ ԾՕՀ) ներքին գործավարությունը, որոշում է «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը, հսկողություն է իրականացնում «ԾՕՀ» նշումով գրությունների՝ սահմանված ժամկետում կատարման նկատմամբ, ինչի վերաբերյալ համայնքի ղեկավարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն, որոշում է փաստաթղթի վրա «ԾՕՀ» նշման անհրաժեշտությունը, «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում դրա մասին զեկուցում է համայնքի ղեկավարին, «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման հանգամանքները պարզելու նպատակով կարող է համապատասխան աշխատակցին ներկայացնել ծառայողական քննության:»*

բ/ NN 2, 3, 5, 6, 11 և 12 հավելվածներով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 2.1-1, 2.3-1, 2.3-4, 2.3-3, 3.1-4 և 3.1-5 ծածկագրերով (համապատասխանաբար՝ աշխատակազմի ֆինանսատնտեսա –

գիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ, աշխատակազմի գլխավոր մասնագետ, աշխատակազմի գլխավոր մասնագետ, աշխատակազմի առաջատար մասնագետ, աշխատակազմի առաջատար մասնագետ) պաշտոնների անձնագրերի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետում ավելացնել նոր՝ համապատասխանաբար՝ «կա», «լ», «հա», «բբ», «բա» և «խա» ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«առնչվում է աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական՝ «ԾՕՀ» նշումով՝ իրեն վերաբերելի փաստաթղթերին և տեղեկություններին, «ԾՕՀ» նշումով ներքին փաստաթղթաշրջանառության մասնակից է, իրեն վերաբերելի «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում ենթակա է ծառայողական քննության»:*

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 294-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 2.3-6 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի գլխավոր մասնագետ) անձնագրի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետում ավելացնել նոր՝

ա/«դա» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«դա/ մասնակցում է գաղտնի փաստաթղթերի մշակման և գաղտնի գործավարության աշխատանքներին,մասնակցում է գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքների իրականացմանը»*

բ/ «դբ» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«դբ/ կազմակերպում է աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական՝ «ԾՕՀ» նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը, պատասխանատու է «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառության կազմակերպման, վարման և սահմանված ժամկետներում կատարման համար, «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում ենթակա է ծառայողական քննության»:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 29
Ջերմուկ